

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՄԻ ՏԱՂԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՈՒ ԺԱՄԱՆԱԿԻ ՀԱՐՑԸ

ԱՐՄԵՆՈՒԶԻ ՍՐԱՊՅԱՆ

Բանասիրության մեջ վիճելի է եղել «Այս ի՞նչ կրակ էր դիս այրեց» (այսուհետև՝ «Այս ի՞նչ կրակ էր») սկսվածքով տաղի հեղինակի հարցը: Տաղը մի սիրային պատմություն է քաջանայի որդու՝ Հովհաննեսի և մոլլայի աղջկա մասին, որն ավարտվում է սիրո հաղթանակով: Այն հայ միջնադարյան դրավոր, հեղինակային բանաստեղծության մեջ հայտնի առաջին սիրային քերթվածն է: Առաջին անգամ տաղը տպագրել է Կ. Կոստանյանը՝ 1905 թ., XVII դ. հանրագիտակ մտածող Պլուզ Հովհաննես Երզնկացու անունով¹: Թեև հետագա տարիներին ևս այն հրատարակվել է որպես Երզնկացու ստեղծագործություն, սակայն կասկածելի է համարվել տաղի հարազատությունն այդ հեղինակին, ենթադրվել է, թե ուշ դարերի մի ա՛յլ Հովհաննես Երզնկացու քերթված է: Ժողովրդական լեզվին ու ոճին ավելի մոտ գրված լինելը, օտար բառերի գործածությունը և սիրային բովանդակությունը անհարկոր են թվացել Պլուզ Հովհաննես Երզնկացու ստեղծագործական ոգուն: Զգտնվելով Երզնկացի այնպիսի մեկը, որին հարմար լիներ վերագրել այն, ավելի հնարավոր կարծվեց Հովհաննես անվան տակ ենթադրել Թլկուրանցուն, որովհետև նա՝ է իրեն խառն Հովհաննես անվանում, և որովհետև տաղն ունի սիրային բովանդակություն: Սակայն այս վարկածը ևս վերջնական չի համարվում: Իրոք, այս ենթադրության օգտին առայժմ չկա և ոչ մի կովան, բացի խն բառից, որ օգտագործվում է նաև «Այս ի՞նչ կրակ էր» տաղում: Իսկ դա շատ թույլ փաստարկ է: Մինչդեռ տաղը Երզնկացուն համարելու մի շարք հիմքեր կան. դրա մեջ պահպանվել են ժամանակի ու վայրի հետ կապված այնպիսի տեղեկություններ, որոնք համընկնում են Պլուզի և Երզնկայի մասին հայտնի պատմական փաստերին: Նախ անդրադառնա՞նք ձևագրական տվյալներին:

Տաղը մեզ հայտնի է Մաշտոցի անվան Մատենադարանի հինգ գրչագրից⁴ և Հալեպում եղած մի այլ օրինակից⁵: Ամենից առաջ նկատենք, որ պահպանված ու մեզ հասած ո՛չ մի ձևագիր տաղը Թլկուրանցուն չի վերագրում: Դրան հակառակ, նրա 1695 թ. ընդօրինակությունը (ձեռ. № 7717) վերնագրում պահել է Երզնկացու անունը, այն էլ այնպիսի՝ շարակցությամբ, որ կարծես զուշացնում է չլիթթել նրան ա՛յլ Հովհաննեսի հետ. «Տաղ Երզնկացի Յովհաննիսէ ասացեալ»: Այստեղ որպես էական ու առաջնային որոշիչ շեշտվել է ո՛չ թե անունը՝ Հովհաննես, այլ տեղը՝ Երզնկացի, այսինքն՝ ճշտվել է հեղինակի երզնկացի՝ և ոչ, ասենք, Թլկուրանցի լինելը: Նման շեշտադրություն չունի ոչ Երզնկացու և ոչ էլ Թլկուրանցու որևէ այլ քերթված: Դրանք վերնագրված են սովորական շարադասությամբ. «Յոհանէս վարդապետի ասացեալ Պլուզոյ», «Նորին Յոհաննիսի վարդապետի Երզնկացոյ ասացեալ», «Յոհաննու վարդապետի Երզնկացոյ» և այլն⁶: Նույնատիպ խորագրերով են նաև Թլկուրանցու գրեթե բոլոր ստեղծագործությունները⁷:

Զեռագրական առումով, մասնավորապես, ուշագրավ է № 10208-ը: Սրա 143ր էջից սկսած իրար են հաջորդում Թլկուրանցու մի քանի բանաստեղծություններ, այսպիսի խորագրերով.

1 Տե՛ս Կ. Կոստանյան, Նոր ժողովածու, պր. Դ, Վաղարշապատ, 1905, էջ 11:

2 Տե՛ս Մ. Պոտուրյան, Միջնադարյան բանաստեղծություններ («Բազմավեպ», 1906, № 6, էջ 350), «Հովհաննես Թլկուրանցի», աշխատասիրությամբ՝ է. Պիվադյանի, Երևան, 1960, էջ 88—91:

3 Տե՛ս «Հովհաննես Թլկուրանցի», էջ 91:

4 Մ. Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ Մատենադարան), ձեռ. № 1990 (ԺԹ), 7715 (1687 թ.), 7717 (1695 թ.), 9271 (ԺԷ), 10208 (ԺԷ) (այսուհետև ձեռագրերի համարը կտրվի բնագրում):

5 Տե՛ս Ա. Սրապյան, Հովհաննես Երզնկացի (այսուհետև՝ «Հովհաննես Երզնկացի»), Երևան, 1958, էջ 271, 87—90:

6 Նույն տեղում, էջ 161, 183, 208, 237, 241—266:

7 «Հովհաննես Թլկուրանցի», էջ 119—213:

1. 143ր Տաղ Յովհաննէս Թուրկուրանցոյ—Ահա եղև պայծառ գարուն, 2. 144ա Նորին Թուրկուրանցոյ է տաղս—Տեսա պատկեր մի գեղեցիկ, 3. 144ր Նորին Յովհաննիսի Թուրկուրանցոյ է տաղս—կոյս երեսացդ է փափաք, 4. 144ր Նորին Թուրկուրանցոյ է տաղս—Հազար Իսուֆ է քեզ ծառայ, 5. 145ր Նորին Յովհաննիսի է տաղս—Այսօր տեսա պատկերմ՝ աղվոր, 6. 146ա Նորին Յովհաննիսի է տաղս—Հանց դունով ալլ ո՞վ տեսեր, 7. 146ր Նորին Յովհաննիսի Թուրկուրանցոյ—Յանկարծակի մէկ մի տեսա, 8. 147ա Նորին Յովհաննիսի Թուրկուրանցոյ է—Արեկ արեկ իմ խուալ սուրաթ, 9. 147ր Տաղ Յովհաննէսի ումեմ գործս—Այս ի՞նչ կրակ էր (ձեռ. № 10308, 1672 թ. հետո), Ինչպես տեսնում ենք, մեզ հետաքրքրող քերթվածք Թուրկուրանցունը չի համարվել, այն էլ այնպիսի մի պարագայում, երբ մշտապես և հետևողականորեն ճշտվել են հեղինակները Լստ այսմ, ութ տաղ հաջորդաբար հաստատվել են որպես նույն հեղինակի գրչի արգասիք, իսկ 9-րդը ճշտվել է իրրեկ ինչ-որ ալլ Հովհաննիսի ստեղծագործություն, ուստի ե գրվել է ո՛չ թե ճերմի՛ն, ալլ ճումբ՛մն» Հովհաննիսի է գործս»։ Այդպես է վարվել գրիչը բոլոր այն՝ դեպքերում, երբ հեղինակը որոշակի չի եղել, Այսպես, օրինակ, Այս ի՞նչ կրակ էր» տաղից անմիջապես հետո նա շարունակել է. Տաղ սիրո, Մարտուանցի ոմն ասացեալ—Այս ինչ խաւար սիրու բաներ, որ անկասկած ինձ վառեցան (149ր), Յովհաննիսի Սեբաստացո ասացեալ—Այն առաջին ժամանակին, սիրու բաներ շատ լինէին (151ա), Նորին Յովհաննիսի Սեբաստացոյ—Վարդենեաց մէջն տեսա նստեր, վարդ է շարեր կլափն ի վեր (152ա), Տաղս Ղարաճարսի Մարտիրոսէ— Յուր եկի հանդիպեցա ես քո սիրուտ, իմ լոյս երես (152ր), Նորին Մարտիրոսի է ասացեալ—Իմ սիրտս ինձի համբեր չի տար և այլն. և ապա, դարձյալ Տաղ վասն սիրու, Ղազար անուն ոմն ասացեալ (154ր), Տաղ ումեմ քահանայի ասացեալ վարդին (157ա), Ալլ տաղ ումեմ կաֆայեցո ասացալ (159ա), Տաղ ի Յունան անուն ումեմն է ասացեալ, վասն սիրու (160ա) և այլն (վերջին օրինակն ավելի հաստատուն է դարձնում ճշգրտումների համաստիությունը)Ց, Այսպիսով, ձևազիրն ընդօրինակողին հայտնի էր, թե Այս ի՞նչ կրակ էր» սկսվածքով տաղը ճերմի՛ն» Թուրկուրանցի Հովհաննիսինը չէ, ալլ ճումբ՛մն» Հովհաննիսի Նվ ո՛չ միայն այդու՝ Որոշակի է, թե նույն լիճակում է գտնվել գրչի ձեռքի տակ եղած ու ավելի վաղ օրինակված նախազաղափարը ևս. այսինքն տաղը մինչ այդ նույնպե՛ս չի հաստատվել որպես Թուրկուրանցու ստեղծագործություն, Ինչ վերաբերում է տաղը պարունակող մյուս չորս գրչագրերին, ապա դրանց վերնագրերն ունեն հետևյալ պատկերը. Մ 9271-ում գրված է. Ճաղ ասացեալ խե Յովհաննիսի ի վերայ Աշային, որ ո՛չ թե հեղինակի, ալլ բովանդակության բացահայտումն է և որեւէ ձևով չի կապվում Թըլկուրանցու անվան հետ։ Նույն բնույթն ունի նաև Հալեպի ձեռագիրը՝ Ճաղ Օվանէսին հետ Աշային»։ Մ 1990 ձեռագրում կա՝ Ճաղ ազնիվ ի Յովանէսէ վերնագիրը, իսկ Մ 7715-ն անխորհրդի է։

Տաղը Երզնկացունը համարելու երրորդ հիմքը դարձյալ ձեռագրական է։ Թուրկուրանցին բոլոր քերթվածների բնագրերում, գրեթե առանց բացառության, հիշում է իր անունն իրրեկ հեղինակ. սա է նրա համար բնութագրականը Լստ որում, նա գերազանցում է պահպանել միևնույնը՝ ճեռ Յովհաննէս Թուրկուրանցի»։ Սրան հակառակ, Երզնկացուն հատուկ չէ իր անվան հիշատակումը՝ Օ, Այդպես է նաև քննության առարկա քերթվածը, որով նույնպես այն Թուրկուրանցու համար դառնում է ոչ բնութագրական։ Ուշադրության է արժանի մի ալլ նրբերանգ ևս։ Թեև Թուրկուրանցին կոչվում է թխն, սակայն մյուս Հովհաննիսիներից նա իրեն առանձնացնում է ո՛չ թե թխն կամ թխն Յովհաննիս, ալլ Թուրկուրանցի՝ լինելու հանգամանքով. ճեռ Յովհաննէս Թուրկուրանցի»։ Մի տաղի մեջ նա նույնիսկ երկու անգամ է շեշտում «Թուրկուրանցի խե», կարծես, անպատճառ հիշեցրած լինելու, թե ինքը ա՛յն խեը կամ ա՛յն Հովհաննիսն է, որ Թուրկուրանցի է և ոչ ալլ տեղացի։ Այս օրինաչափությունից դուրս են մնում մի քանի ստեղծագործություն միայն՝ Մ ինչդեռ տաղը Թուրկուրանցուն վերագրելու հիմնական ազդակը եղել է թխն բառը, որը, փաստորեն, հեղինակի մականունը չէ, ալլ տվյալ ժամանակահատվածում ու տվյալ պարագաներում գործող անձի հոգեվիճակը բացահայտող որոշիչ, այսինքն՝ թխն վերագիրը երկու Հովհաննիսի համար միանշա-

⁶ Հայտնի է, օրինակ, որ այս տաղի հեղինակը ևս, իրոք, Հունանը չէ, ալլ Կոստանդին Երզնկացին (տե՛ս Կոստանդին Երզնկացի, աշխատասիրությունը Ա. Սրապյանի, Երևան, 1962, էջ 163—165)։

⁹ Տե՛ս «Հովհաննիս Թուրկուրանցի», էջ 29, 79—85, 119—213։

¹⁰ Նրան առանձնահատուկ են անվանակապը, ծայրակապը, ծայրոտնը (ակրոստիքոս)։

¹¹ Տե՛ս «Հովհաննիս Թուրկուրանցի», էջ 81, 82, 83, 186։

նակ չի եղել. մի դեպքում այն բնավորության ու վարքի ժառանգական կայուն ու առողջ գիծ է (Թլկուրանցի Հովհաննես), մյուս դեպքում ոչ բնատուր՝ անցողիկության լիցք ունեցող ժամանակավոր գոյացություն, նոր առաջացած հիվանդագին հոգեվիճակ (տաղի Հովհաննես)։

Խե Յովաննէսն է քո ծառա,
Շուտով տէրտես տէրման արայ.
Թէ չէ խեցայ, լեռներն ինկայ,
Ջէտ մոմ ի տեղըս հագեցայ¹²։

Դրա հավաստիքն են այն տողերը ևս, ուր Հովհաննեսի մայրն օգնության է կանչում արեղաներին ու սարկավազներին՝ «մեղա» ու «Տէր ողորմեա» ասելու ա՛յն հույսով, թե իր խեցած ու լեռներն ընկած զավակը տուն կդառնա ու խելքը վրան կգա¹³։ Եվ այդպես էլ լինում է. Աշայի համաձայնությունը ստանալուց հետո, Հովհաննեսն այլևս ո՛չ թե թխեա է, այլ նախկին «ծանր ի խելացը», որի մասին արդեն ասվում է.

Մոյ Յովաննէս՝ փոքր ի պոյաց,
Փոքր ի՝ պոյաց, ծանր ի խելաց...¹⁴

Սա նշանակում է, թե Հովհաննեսի բնավորության կայուն որոշիչը խելությունը չէ, այլ խաղաղ, լուրջ վարքագիծը, որը ևս տաղերգուին Թլկուրանցու հետ շնունդացնելու կոման է դառնում։

Հովհաննեսի ոչ միայն հեղինակ, այլև գործող անձ լինելն է հաստատում քերթվածի շարադրանքը ևս, ուր հեղինակը իր մասին խոսում է երրորդ դեմքով¹⁵։

Տաղը Երզնկացու զրչին անհարազատ կարծելու երկրորդ «փաստարկը» բովանդակության սիրային բնույթն է, որը, սակայն, չէր կարող օտար լինել ստեղծագործական ու աշխարհայացքային այնպիսի լայն մտահորիզոն ունեցող հանրագիտակ հեղինակի, ինչպիսին է Երզնկացին։ Կար ժամանակ, որ հայրենի չափով զրված քառյակները ևս անհարիր էին համարվում նրա ուժուն՝ լեզվական ու ոճական զանազան «հիմքերով» պատճառաբանված, սակայն հետագա քրննությունները հերքեցին կասկածները։ Այդպիսին է նաև այս տաղի պարագան, որի հիմնական գաղափարը չի խանգարում այն Երզնկացուն հատկացնելու։ Տաղը սովորական սիրային պատմություն չէ, այլ հատուկ նպատակամղվածություն ունեցող ծրագրային ստեղծագործություն։ Այստեղ կա մի ավելի կարևոր գործոն. տաղն, ըստ էության, ավարտվում է ոչ թե սիրո, այլ գաղափարի՝ ուսմունքի գերադասության (տվյալ դեպքում՝ քրիստոնեության), որ ավելի վեր է, քան մյուս բոլոր գործոնները։ Ենթարկվելով սիրո ամենազոր ուժին՝ տերտերի տղան չի՞ զոհարարում իր ազգային ու կրոնական համոզմունքները։ Նրան հավատափոխ անելու Աշայի բոլոր ջանքերն անցնում են ապարդյուն¹⁶։ Աշան ի՛նքն է քրիստոնեություն ընդունում։

Բանաստեղծության այսպիսի ավարտը չէր կարող պատահական լինել։ Տաղն ուներ ո՛չ թե սոսկ սիրային բովանդակություն, այլ գաղափարական հեռահարություն։ Ամենայն հավանականությամբ, այն մտահացված էր ժամանակի պատմաքաղաքական իրավիճակից ելնելով, ընդդեմ այն ամուսնությունների, որոնք կարող էին հանգել հայի հավատափոխության, մանավանդ, թեև զորվել տիրողների կամքով։ Տաղը գեղագիտական հնարանք ու միջոց էր՝ նման հետևանքներից ետ պահելու կանխահոգությամբ։

Մի այլ կարևոր հանգամանք ևս՝ Քրիստոնեություն է ընդունում ո՛չ թե սովորական մեկը, այլ տեղի դատի մոլլայի դուստրն ու շահնայի քուլը։ Գաղափարաբանական այսպիսի ոգի ու բովանդակություն ունեցող մի քերթված կարող էր ասպարեզ իջնել հայերի գերիշխանության և մոնղոլների հասարակ բազմաթվության ու կրոնական հանդուրժողականության պայմաններում միայն (ինչպիսին էր վիճակը XIII դարում)։ Հետագա դարերում, ընդհուպ մինչև Մեծ եղեռնը, պարզապես անհնար էր նման ստեղծագործության երևան գալը։ XIII դ. վերջերին և XIV դ.

¹² «Հովհաննես Երզնկացի», էջ 169։

¹³ Նույն տեղում, էջ 165։

¹⁴ Նույն տեղում, էջ 170։ Ճ 10208 ձեռագիրն ունի՝ «Մո Յովաննէս, փոքր ի յօրաց, Փոքր ի յօրաց, ծանր ի խելաց, որ էլ ավելի է ընդգծում Հովհաննեսի ի ծնէ խելոյ, այլ ոչ թե խելի»։

¹⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 168։

¹⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 170։

սկզբներին, երբ մոնղոլ խաները սկսում են մասնականություն ընդունել, հայաժանքները չրիստոնեության դեմ նկատելիորեն ուժեղանում են, դաժանանում, և հայկական ֆեոդալական իշխանությունների դերը երկրի քաղաքական, տնտեսական կյանքում զգալի շափով թուլանում է, իսկ XV դ. մասնականությունն արդեն ռազմական և քաղաքական առումով բացարձակ ուժ է ստանում¹⁷։ Սրանից հետևում է, թե չնայած նախ ու Աշայի սիրերգը կարող էր դրվել Վրայն այնպիսի՝ մի վայրում, պատմաքաղաքական այնպիսի՝ ժամանակներում, երբ, օտար տիրապետության տակ լինելով հանդերձ, այդ վայրը միաժամանակ պահպանում էր իր ինքնուրույնությունը ու իրավունքները և ի դուրս էր պաշտպանել սեփական ժողովրդի հավատը՝ հայկական կրոնը, չրիստոնեությունը, Այդպիսին էր Երզնկան XIII դ., մոնղոլների տիրապետության առաջին շրջանում¹⁸։ Պատմական փաստերը վկայում են, որ մոնղոլների՝ քաղաքը գրավելու գրեթե առաջին օրերից Երզնկան ուներ իր հոգևոր ու աշխարհիկ առաջնորդները, որ սերում էին դեռևս V դ. հայտնի իշխանական տոհմից և թողից ծոռ ժառանգարար շարունակում էին կառավարել Երզնկան։ Մասնավորապես նշանավոր էին Երզնկացուն ժամանակակից՝ XIII դ. կեսերում ապրած Սարգիս արքեպիսկոպոսն ու որդին՝ Հովհաննես իշխանը, որոնք մեծ հարգանք ու պատիվ էին վայելում և մեծարվում ինչպես մոնղոլ խաների, այնպես էլ բյուզանդական կայսեր կողմից։ Հայրը և որդին առանձնապես կարևոր դեր խաղացին Երզնկայի քաղաքական, տնտեսական ու մշակութային կյանքի զարգացման գործում¹⁹։ Այսպիսի պայմաններում է, որ կառուցվեց (կամ վերակառուցվեց) Երզնկայի հույակապ տաճարը՝ ս. Փրկիչ կաթողիկոսի՝ Սարգիս արքեպիսկոպոսի և Հովհաննես իշխանի ձեռքով, այսպիսի իրավիճակում էր միայն, որ կարող էր ստեղծվել նաև թեև իհրակ էր սկսվածքով տաղը։ Սա պետք է որ լիներ մեծ հեղինակություն ու համբավ ունեցող նրանց արյունակցի ու ազգակցի՝ Հովհաննես Երզնկացու գործը²⁰։

Տաղն իր տիպարական ու գաղափարաբանական զուգահեռը չունի հայ միջնադարի սիրային քնարերգության մեջ, սկսած Կոստանդին Երզնկացուց մինչև Սայաթ-Նովա, և հատկանշական չէ մեր սիրերգակներից ոչ մեկին, մինչդեռ, ինչպես ամբողջության մեջ, այնպես էլ գաղափարաբանությամբ հարազատ է Հովհաննես Երզնկացու հայացքներին ու մատենագրական ողջ վաստակին։ Մտածող և գործիչ բանաստեղծը խորություն չի դնում ազգերի ու կրոնների միջև, երբ խնդիրը վերաբերում է գիտելիքներ ու իմացություն ձեռք բերելուն, ժողովուրդների հարաբերություններին՝ առհասարակ, բայց ոչ կրոնին ու հավատին²¹։ Այս գաղափարը նա զարգացնում ու տարածում է իր արձակում ևս, որ ուղղված է հասարակության բոլոր շերտերին, հեռու մնալ անհարազատ կրոններից ու հայացքներից, հաստատուն ու անաղարտ պահել սեփականը, ազգայինը, հայկականը²²։ Երզնկացին սիրային տաղն անդամ ժառանգելում է իր նպատակներին, հարազատ մնալով ինքն իրեն՝ որպես ազգային ու հայրենասիրական գաղափարներով տեղադրված լայնախոհ մտածող ու գործիչ և սիրո հարցերում նույնպես չի զիջում իր նվիրական համոզմունքները, այլև պատշաճանում ու տարածում է դրանք։

17 Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, Երևան, 1976, էջ 614—644, 700—714, 761—767։

18 Նույն տեղում, էջ 615—616։

19 Տե՛ս Հ ար ո թ յ ու ն Ք յ ու ռ յ ա ն, Երիզա և Եկեղյաց գավառ (այսուհետև՝ «Երիզա և Եկեղյաց գավառ»), հ. Ա, Վենետիկ, 1953, էջ 117—152, «Հովհաննես Երզնկացի», էջ 13—16, «Կոստանդին Երզնկացի», էջ 17—21, է. Բ ա ղ ա ս ա ռ յ ա ն, Երզնկայի հայկական իշխանությունը XIII—XV դարերում (ՀՍՍՀ ԳԱ «Նորագիտություն», 1970, № 2, էջ 36—40), ն ու յ ն ի՝ Հովհաննես Երզնկացին և նրա խրատական արձակը (այսուհետև՝ է. Բ ա ղ ա ս ա ռ յ ա ն), Երևան, 1977, էջ 12—21, 25։

20 Տե՛ս է. Բ ա ղ ա ս ա ռ յ ա ն, էջ 24—25։

21 «Նորին սուրբ և իմաստուն վարդապետին Յոհաննիսի Երզնկացույ, Բան յաղաքս երկնային զարդուց, շափաբերմամբ, ի խնդրոյ բարեպաշտ իշխանին Ապոստոլի, ըստ նախագիծ տառիս տանց» [տե՛ս «Տեորակ համառոտ և լի իմաստնախոհ բանիք, արարեալ հոգելից և իմաստուն վարդապետին Յոհաննիսի Երզնկացույ» (այսուհետև՝ «Տեորակ»), Նոր նախնի-չևան, 1792, էջ 47, 49]։

22 «Սահման և կանոնք և «Կրկին կանոնք» (տե՛ս է. Բ ա ղ ա ս ա ռ յ ա ն, էջ 227, 237—238)։

Տաղը Երզնկացունը համարելու արգելք չեն նաև ժողովրդական ոճին ու արտահայտություններին ավելի մոտ լեզվով դրված լինելու հանգամանքն ու օտար բառերի գործածությունը։ Երզնկացին Հոգեբանի ու իմաստասերի բացառիկ խորաթափանցությամբ է զգում բառի ու բանի ներուժակության երանգաշատ ծալքերն ու արժեքը, ներազդեցության բազմաբնույթ ուժն ու խորությունը, ըստ ժամանակի ու տեղի համապատասխան ընտրություն կատարելու անհրաժեշտությունը, հասարակության տարբեր շերտերի համար, հոգեկան տարբեր վիճակների ժամանակ բառի օգտակարության չափն ու տեսակները։ Այս հայեցակետից էլ նա գրում է. «Ամենայն բան քաղցր՝ անխորժ ի դառնութեան ժամանակի թունացի։ Արդ, թէպէտ լռելոյ ե խօսելոյ իցէ ընտրութիւն ժամանակի, բայց ատելոյ բանին մի՞ երբէք լիցի ժամանակ, այլ յամենայն ժամ՝ արեւի, և յամենայն տեղիս և ի կիրճ՝ զանազան, զի բան՝ օրինացն Աստուծոյ ճոխացելոցն փարթամութեամբ՝ չափաւորութեան դաստիարակ, և աղքատացելոցն և նւաստիցն՝ մեծախորհրդութեան խրատիւ, ուղիղ զնացողացն ի պատուիրանացն շաւիղ՝ յաւելու լընթացս և զգլորեցելոցն զայնթակողութեամբ՝ ձեռն կարկառէ, ընդ տկարացելումն՝ տկարանա և ընդ զօրացելումն՝ զօրարձակից լինի։ Բան՝ զաւառականաց մարդասիրութեան օրէնսսուտց, և օտարացելոցն լընտանեաց՝ պանդխտակից պատուելի, յելիցն յաշխարհէս՝ առաջնորդ բարի, և մտից վերին աշխարհին՝ բեռնակիր դանձու. բան՝ վայրենացեալ սրտմտութեանն սանձ, նախանձու բոցոյն՝ ցող շիշուցիչ, տրտմութեան սգոյն՝ սգակից, զուարթարար, հեշտալի և երկրական ցանկութեանց ողջախոհեցուցիչ, ատելութեան չափու խորտակիչ և սիրոյն սահմանի ընդարձակիչ» (ձեռ. № 2173, ԺԴ, էջ 64ր)։

Հայ ե հարևան ժողովուրդների լեզվական կարողությունների ու հնարավորությունների օգտագործման մասին ևս Երզնկացին ունի հատուկ վերաբերմունք, հատուկ տեսական հայացք ու համոզմունք, որ արտահայտում է տարբեր առիթներով ու տարբեր տեսանկյուններից։ Օգտվելով Վ. դ. Նշանավոր գեղագետ պատմիչ ու մտածող Եղիշեի ձևակերպումից, նա հաստատում է այն ճշմարտությունը, թե երբպէս գոյն առ գոյն պայծառանայ, և դէմք ի դիմաց, և հասակ առ հասակ, և արուեստ յարուեստէ աճէ, և գործ ի գործոյ զարւանայ, նոյնպէս և լեզու լեզուաւ գեղեցկանայ, պիտանացու առ ի գիւտ ստուգարանութեան, զի և որ կարի խաղաղութիւն լեզուն է՝ յազուտ դասնիս²³։ Բառ ու բանի, բարբառների և օտար լեզուների մասին այսպիսի հայացքներ տեսնելով և դրանց իմացության կարևորությունն ու պիտանիությունն՝ առնվազն հանգամանքով, տաղաչափության ու ստուգարանության համար այդչափ շեշտող բանաստեղծն ու քերականը չէ՞ր կարող այլ կերպ գործել։ Բանաստեղծի, գործչի ու գիտնականի խոսքի մեջ ո՞չ միայն չկա միատեսակություն, այլև յուրաքանչյուր բովանդակություն և գրեթե յուրաքանչյուր գործ ունի համապատասխան արտահայտության ձև, համապատասխան բառազանձ, լեզու ու ոճ՝ մերթ դրանք, մերթ հրապարակախոսական, հաճախ գեղարվեստական, զարար կամ աշխարհարար, հարմարեցված լսող ու ընթերցող հասարակությանը, նպատակադրությանը²⁴։ Ահա այս ելակետով՝ տեղին ու ըստ կիրարկման անհրաժեշտության, ըստ նյութի թելադրանքի ու պահանջի են օգտագործվել բարբառային և օտար բառերը՝ «Այս ի՞նչ կրակ էր» տաղում ևս։

Երզնկացու ոճի և լեզվի մեջ միասնություն գտնելն ավելի դժվար կլինի, եթե նկատի ունենանք մասնավոր դրանք ու արձակը («Երատ հասարակացը», «Երար Աստուած զմարդն հոգի ե մարմին» սկսվածքով խրատականը), որոնց մեջ նույնպես բարբառային և օտար բառեր է օգտագործում՝ իսկի, տամահություն, շմտէ, իրեք, դժար, էնց, ընցգուն, մին, դարտակ, դարիպ, շուուշ, թուման, մասխարայ, հունար, խըլսայ, մըսխել, դալաթ, ամալ, կիւնահ, զահլա, էլմ, ասլ, զամշի, դումրի, դատր, դալտ, խապար, խալաս, տուլպ, փոշիման, հունար, շօպան, զնճիլ, նըսէֆ, փահրէղ և այլն։ Եթե ի լրումն այս ամենի ավելացնենք, որ արարերենից ու պարսկերենից բացի, «վաղ ժամանակներից, գոնե 13-րդ դարից» սկսած, հայ իրականություն էր մուտք գործել նաև թուրքերենը²⁵, ապա զարմանալի չեն թվա ինչպես այս, այնպես էլ մյուս ստեղծագործությունների մեջ երևան եկած թուրքերեն կամ թուրքերեն համարվող բառերը, և «կարելի չէ անգամ ճշտել, թե հատկապես ո՞ր լեզվից՝ ուղղակի արարերենից, պարսկերենից, թե՞

²³ Հ ո վ հ ա ն ն ե ս Երզնկացի, «Հաւաքումն մեկնութեան քերականի» (այսուհետև՝ «Հաւաքումն մեկնութեան քերականի»), աշխատասիրությամբ՝ Լ. Խաչերյանի, Լոս Անջելոս, 1983, էջ 91։

²⁴ Տե՛ս «Հովհաննես Երզնկացի», էջ 143—266։

²⁵ Տե՛ս Լ. Ա ճ ա ո յ ա ն, Հայոց լեզվի պատմություն, մաս II, Երևան, 1951, էջ 358 (տե՛ս նաև՝ էջ 256—281)։

թուրքերինից են մեզ անցնել²⁶։ Դրանք տաղը Երզնկացուն համարելու խոչընդոտ են համարվում։ Շեշտենք, սակայն, որ տաղում օգտագործված օտար գրեթե բոլոր բառերը, շնչին բացառությամբ, արաբական ու պարսկական ակունք ունեն։ Կէտաւի, ճուղապ, ալլա, շէյտուլլայ, զումրի, դաւի, դէրման, մուհալ, մուհալի, ճուպայ ե այլն։ Տարբեր լեզուների ու բարբառների զնահատման և դրանք ըստ հարկի օգտագործելու մասին Երզնկացու սկզբունքներն առաջադնում ու կենսունակ են։ Դրանք բացահայտում են հեղինակի լեզվի ու ոճի բազմատեսակության հիմքերն ու անհրաժեշտությունը, հարազատորեն համընկնում նրա գործնական ծրագրերին ու դրանք կիրարկմանը։ Իր տիեզերագիտական աշխատության մեջ գործածած լեզվի մասին Երզնկացին ուղղակի հայանում է. «Պարզեալ գրկի համառատ բանի և աշխարհական խօսիւմ, վսեմ դիւրաւ հասկանալի լինելոյ բնորոշողագ»²⁷։ Երզնկացու ստեղծագործության հինգ այս առանձնահատկությունն է շեշտում Գրիգոր Դարանաղցին, գրելով. «Եւ այլ համառօտ խրատական կտէօնս արարեալ է՝ պարզ և յստակ զեղծուկ բառիւ, յաղագս զեղջկաց... մեկնելով պարզ և յստակ, և աւանդելով ամենայն Հայաստանայց, որպէս պատուական քարինս»²⁸։ Դեռ իր ժամանակին Կ. Կոստանյանը գրել է. «Հիմնվել միայն «ոճի» ու լեզվի» վրա, բավական չէ, քանի որ ակներև է. թե ժ. դարում նույնիսկ Հովհ. Երզնկացու ոճի և լեզվի մեջ միանմանություն կամ հարթություն չկա... Եթե դոցա բոլորի տարբերությամբ դատելու լինինք, պետք է ենթադրենք մի քանի հեղինակներ»²⁹։

Այսպիսով, տաղը Երզնկացուն համարելուն արգելք չեն ո՛չ թխն բառը, ո՛չ սիրային բնույթը, ո՛չ ժողովրդական ոճն ու արտահայտությունները և ո՛չ էլ օտար բառերի օգտագործումը։ Անգայն տաղը Բիկուրանցուն վերագրելու ենթադրությունը հերքվում է տեղի, ժամանակի, անձնավորության և ստեղծագործության հետ կապվող և բազմապիսի այլ կոմպենսերով։ Դրանցից առաջինը, և ամենահիմնավորը, ձեռագրում պահպանված անգանունն է, որ, վերնագրից բացի, հիշատակվում է նաև բուն շարադրանքում։

Խև Յովհաննէսն երբ զայն լըսեց,
Բըռնեց զճամբան ի Եզընկի³⁰։

Այս, նախ նշանակում է, թե գործողությունը կատարվում է Երզնկայում և ապա՝ գործող անձը՝ Հովհաննեսը, նույնպես գտնվում է Երզնկային մոտ մի այնպիսի վայրում, որտեղից կարող էր արագորեն քաղաք հասնել (նաև լուր առնել)։ Այդ վայրի մասին տաղում ասվում է.

Օրըն շարաթ լոյս կիրակի,
Վերի վաճաճն ի վայր կուզի...³¹։

Սրանից հետևում է, թե Հովհաննեսը «վերի» վանքերից մեկի աշակերտն էր, որ շարաթ օրով, Մաղոսարանը ձեռքին քաղաք էր իշխում։ Այս քաղաքը տաղում հիշված «Եզընկան» լինելու օգտին են խոսում Եկեղյաց գավառի վանք-դպրատների մասին եղած տեղեկություններն ու փաստերը։ Հայտնի է, որ Երզնկայի վանքերը տեղակայված էին Լուսավորչի կամ Սեպուհ լեռան ստորոտներին և դպրատներ էին³², իսկ քաղաքը գտնվում էր ցածրում, լեռներով ու վանքերով շրջապատված մի գոգավոր հարթավայրում՝ Երզնկայի դաշտում³³։ Թեև այդ վանքերն ունեին իրենց անունները, սակայն բարձր տեղանքի կամ մեկը մյուսի ու քաղաքի հանդեպ գրաված դիրքի հետևանքով տարբերվում էին նաև այդ տեղանքը շեշտող որոշիչներով. բնակիչները դրանք կոչում

26 Տե՛ս նույն տեղում, էջ 281։

27 Տե՛ս «Տեառակ», Առաջաբանութիւն հեղինակին, էջ Թ—Ժ։

28 «Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամայի երկու կամ Դարանաղցու», Երուսաղեմ, 1915, էջ 400։

29 Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Կ. Կոստանյանի արխիվ, № 279։

30 «Հովհաննէս Երզնկացի», էջ 168։

31 Նույն տեղում, էջ 163։

32 Տե՛ս «Երեզա և Եկեղյաց գավառ», էջ 42—47, 62—64, 86—91 և հետ. «Հովհաննէս Երզնկացի», էջ 40—41, 46—48։

33 Տե՛ս Հ. Ոսկյան, Բարձր Հայքի վանքերը, Վիեննա, 1951, էջ 32, 67, 95։ Ոսկյանը, վկայակոչում է նաև մի շարք աղբյուրներ, ի հաստատումն իր նկարագրությունների։

էին նաև «վերի» կամ «վարի» վանք անուններով³⁴։ Այդ սովորույթը շարունակվում էր մինչև 1915—1918 թթ., ինչպես հիշում են Եկեղյաց գավառի նախկին բնակիչները։ Ավելի հիմնավոր է այն վկայությունը, որ պահպանվել է Երզնկայի ժողովրդական երգերից մեկում (գուցե և ուրիշներում, որ հայտնի չէ մեզ)։

Ի՛նչ դուն կուզաս վերի վանա՞

Տարգմտող հղեր եմ դիվանա (Խն—Ա. Ս.)³⁵։

Այսպիսով, բնագրի «վերի» վանքերը նույնպես տաղը կապում են Երզնկայի հետ, մերժելով «Բլունեց ղճամբան ի Եզրնկին» տաղի այլընթերցումները ևս. «Բլունեց ղճամբան որ տվին», «Բլունեց ղճամբան ի յտվին», «Բլունեց ղճամբան սրտով ի լին», «Բլունեց ղճամբայն ի սարվին»³⁶։ Պատահական չէ, որ փոփոխվել է տաղի միայն մեկ բառը՝ տեղանունը, որ հետևանք է տաղի տարածման՝ ժողովրդականացման³⁷ և Եզնկա բառի աստիճանական օտարացման, որոշակիությունից, եզակիությունից ընդհանրականանալու ձգտման։ Ուստի և, ինչպես տեսնում ենք, առաջացել են բունազբուսիկ, անիմաստ՝ տաղի բովանդակությանը տրամաբանորեն հակասող հոնգավորումներ ու չափավորումներ։ Մասնավորապես կանգ առնենք հայկական տարընթերցման վրա, որ թվում է, թե կարող է ընդունելի լինել³⁸։ Սակայն սա ևս արհեստական է, բովանդակության ու գործողությունների զարգացման ընթացքին անհարազատ, նույնիսկ հակառակ։ Սրա նախորդ, ինչպես նաև հաջորդ տողերից որոշակիորեն երևում է, որ Հովհաննեսը ո՛չ թե սարբարձրանալու, այլ սարից վար՝ քաղաք իջնելու ճամփան է բռնել։

Վերի վանացն ի վայր կուգի։

Խնցած, «լեռնեւն ընկած» Հովհաննեսին մայրը ևս փնտրում էր ո՛չ այլուր, քան լեռներում՝ «վերի» վանքերում։

Վերի վաներացն ի շուրջ կուգայ...³⁹

Այս ամենը ինքնըստինքյան մերժում են տաղի այն ընթերցումը ևս, ըստ որի՝ Աշայի լացի լուրն առնելով, Հովհաննեսը բռնել էր սար բարձրանալու և ոչ սարից «վայր», քաղաք իջնելու ճամփան։ Տրամաբանորեն դա են հաստատում տաղի այն տողերը, ուր ասվում է, թե Հովհաննեսը գալիս էր Աշայի ու նրա հոր՝ դատի մոլլայի մոտ⁴⁰, որի նստավայրը ո՛չ թե սարը, այլ քաղաքը կարող էր լինել միայն, տվյալ դեպքում՝ Երզնկան։ Այս դատին, սակայն, նաև քաղաքի շահնայի՝ Աշայի եղբոր, հայրն է։ Շահնա (շահն) նշանակում է ռոստիկան, որ պահպանել զգալառն և զքաղաքն ի շարութենէ և վնասուած⁴¹, ինչպես նաև քաղաքապետ⁴²։ Իսկ շահն իրոք կար Երզնկայում, առնվազն մոնղոլների նվաճման առաջին իսկ օրերից։ Այդ մասին ուղղակի վկայություն կա պատմիչների գործերում։ Օրինակ, Գրիգոր Ակներցին (Մաղաքիա աբեղա) ասում է. «Յարձակեցան ի վերայ աշխարհին Հոռոմոց, առին զԵրզնկայն յառաջագոյն և թողին շահնայ»⁴³։ Այսպիսի մի շահն էր, ահա, Աշայի եղբայրը, որ մոնղոլների տիրապետության շրջանում գուցե և առաջինն էր Երզնկայում, իսկ հայրը՝ դատի՝ դատավոր, իշխան կամ կառավարիչ, որին Հովհաննեսը նաև թագավոր է կոչում։ Արդյո՞ք Թլկուրանը կարող էր դատի ու շահնա ունենալ։ Իհարկե, ո՛չ։ Թլկուրանն ամենից առաջ քաղաք չէր, այլ գյուղ կամ ավան, ուր չէին կարող լինել

³⁴ Ուշագրավ է, որ Երզնկան ունի նաև «վերի» ու «վարի» կոչվող մի շարք գյուղեր ու վայրեր. Վերի Ուլա—Վարի Ուլա, Վերի Վաղավեր—Վարի Վաղավեր, Վերի Ձիֆլիկ—Վարի Ձիֆլիկ, Վերի Ղաաաղան—Վարի Ղատաղան, այլև Վարի Զորանոց, Վարի Որբանոց և այլն։

³⁵ Արամ Ա զնամուրյան, Հեթիաթներ, զվարճալիքներ, Տիրբորն Հայթս, Միչիգան, 1971, էջ 161։

³⁶ Վերջինս պահպանվել է տաղի հայկական ձեռագրում։

³⁷ «Հովհաննես Երզնկացի», էջ 88—89։

³⁸ Էմ. Պիվազյանն ընտրել է այս տարընթերցումը (տե՛ս «Հովհաննես Թլկուրանցի», էջ 228)։

³⁹ «Հովհաննես Երզնկացի», էջ 165։

⁴⁰ Նույն տեղում, էջ 168։

⁴¹ «Բառարան պարսկերէն ի Գէորգայ դպրէ Տէր-Յովհաննէսեան Պալատացոյ», Կոստանդնուպոլիս, 1826, էջ 345, հմտ. «Երիվա և Եկեղյաց գավառ», էջ 108։

⁴² Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, էջ 616։

⁴³ «Մաղաքիա աբեղայի Պատմութիւն վասն ազգին ճեպողաց», Ս. Պետերբուրգ, 1870, էջ 15։

ոչ մի՛կը, ոչ մի՛նալը՝ Այս փաստը նույնպես թելադրում է, թե Թլկուրանն առհասարակ չի առնչվում տաղում նկարագրվող դեպքերի հետ, մասնավորապես որ Թլկուրանցու մասին ես հայտնի չէ որևէ անդեկություն, որը նրան կապեր նման տեղանքի, դեպքերի, հասարակական, քաղաքական իրադրությունների հետ:

Ավելացնենք հօգուտ Երզնկայի իրոսող և տաղի հնությունը հաստատող մի այլ կարևոր փաստարկ. Ք 7717 ձեռագիրը բնագրում պահել և մեղ է հասցրել Եկեղյաց գավառի մայրաքաղաքի հնագույն անվանումը՝ Նղնկա իմաստավորմամբ և ոչ հետագա՝ Երզնկա վերանվանմամբ⁴⁴, Այդպես են քաղաքը հիշատակում ընդհանուր վաղեմի աղբյուրները, այդպես են պահպանել այն Երզնկացուն ժամանակակից պատմիչներն ու մատենագիրները⁴⁵, այդպես է գրել նաև տաղի հեղինակը՝ Սակայն, որ ամենակարևորն է, այդպես են գրված Երզնկան ու Երզնկացին՝ Պուլ Հովհաննեսի ընդհանուր շարժում և արձակ ստեղծագործությունների վերնագրերում ու բնագրերում՝ Նղնկա, Լիզնկացի, Նղնկայեցի⁴⁶, Սա, ամենից առաջ, նշանակում է, թե քննության ենթակա քերթվածը ստեղծվել է այնպիսի ժամանակներում, երբ քաղաքը դեռևս պահպանում էր հին դարերի հուշը, չկրում էր հեթանոսական շրջանի անունը: Սրանից բխում է նաև, թե ձեռագրի նախագաղափարը ևս ունեցել է նույն պատկերը. այսինքն՝ մեզ հայտնի ձեռագրի ընդգրկնակությունից էլ առաջ տաղն ունեցել է Նղնկա գրությունը (չէր կարող հակառակը լինել), որ նշանակում է, թե բնագրի Լիզնկա բառն իր օրինական տեղում է և ոչ ճեղքված փոփոխություն կամ հավելում: Սրա հիման վրա է, անշուշտ, որ հենց այս՝ Ք 7717, ձեռագրի վերնագրում ճշտվել է հեղինակը և գրվել. «Տաղ Երզնկացի Յովանիսէ ասացեալ»⁴⁷, սակայն արդեն ուշ շրջանում՝ XVII դ., քաղաքի այդ ժամանակների համար ընդունված անվանումով, Այս փաստը ևս հերքում է տաղը հետագա դարերի մի այլ Երզնկացի Հովհաննեսի վերագրելու վարկածը, ընդ որ պարագաներում այն բնութագրական թողնելով Պուլզի համար:

Տաղը տիպարանական է Երզնկացու ստեղծագործության համար գեղագիտական տեսանկյունից ևս: Այն ավելի հակված է մարդու ներաշխարհը բացող, երկխոսություններով ու գործողություններով հարուստ, շարժուն ու գնալուն, դրամատիկական ռիթմով զարգացող արվեստի, ինչպես են նրա կրոնական թե աշխարհիկ մյուս քերթվածները («Ցակոր, զարթիր ի քնոյ մեղաց», «Աղամայ որդիք ամեն», «Մեր տէրն ի դրախտն երեկ», «Աղամ նստել դուռն ի դրախտին», «Աստուածածին սրբուհին», նույնիսկ ձրկնային մարմիններին նվիրված հազարտողյան ծավալուն գիտական քերթվածը և այլն): Սրանց մեջ, ինչպես նաև «Այս ի՞նչ կրակ էր» տաղում, երևան է գալիս հեղինակի մեծ վարպետությունը, համեմատություններով մտածելու և վերարտադրելու բարձր արվեստը, աշխույժ, ռիթմիկ գրելաձևը: Տաղը հորինված է նույն սահուն ոճով, որով զբղված են «Ցակոր զարթիր ի քնոյ մեղացը» և մի քանի այլ ստեղծագործություններ, երկամասնակ, շորս ոտքով և ութամասնակ տողերով: Մինչդեռ Թլկուրանցին լուսի դրամատիկական շեշտ ունեցող, երկխոսություններով զարգացող սիրային քերթվածներ: Նրա վիպական գործերն անգամ էապես նկարագրական, պատմողական բնույթ ունեն:

Տաղը Երզնկացունը համարելու հիմքեր են տալիս երկու Հովհաննեսների մասին եղած կենսագրական տվյալները ևս: Երզնկացին, որի անունը նույնպես Հովհաննես էր, հայտնի էր նաև Պուլզ մականունով, որ նշանակում է կարճահասակ (տաղում՝ «փօր ի պոյաց» կամ՝ «փօր ի

44 Տե՛ս Գ ա Ր Ե գ ի ն Ս Ր Վ ա ն ձ ա յ ա ն, Թորոս աղբար, մասն Բ, Կ. Պուլիս, 1884, էջ 47—48, «Երեզա և Եկեղեաց գավառ», էջ 13—14, 27—28:

45 Տե՛ս «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862, «Մաղաքի աբեղայի Պատմութիւն վասն ազգին նետողաց», Կիրակոս Գ ա ն ձ ա կ Ե Յ ի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Երուսաղեմ, 1869: XV դ. աղբյուրներում և հետագայում արդեն սկսում է երևան գալ նաև Երզնկա գրությունը (տե՛ս «ԺԾ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Բ, Երևան, 1958, էջ 354, մասն Գ, Երևան, 1967, էջ 40, 287, «Հայերեն ձեռագրերի օձ դարի հիշատակարաններ», Հ. Ա. Երևան, 1974, էջ 127, 294, 373 և այլն):

46 Տե՛ս «Հովհաննես Երզնկացի», էջ 270—308, է. Բ ա ղ զ ա ս ա Ր յ ա ն, էջ 23, 28, 221 և այլուր: Նղնկա դրությունը մի տեղ ունի նաև Թլկուրանցին (տե՛ս «Հովհաննես Թլկուրանցի», էջ 156):

47 Այս նույն օրինակով Կոստանդին Երզնկացու «Հանց գեղեցիկ մորճ ու չիտակ» սկսվածքով տաղի վերջին տեղի վերնագիր է բարձրացել «Յունան»-ը որպես հեղինակի անուն (տե՛ս ձեռ. Ք 10208, էջ 160ա և Կոստանդին Երզնկացի, էջ 165):

յօրաց»), ինչպես վկայում են նրա մասին պահպանված ավանդազրույցները և «Նուզ» ու «Էսաբն» մականունները⁴⁸, փաստ է նաև, որ Երզնկացին իր նախնական կրթությունը ստացել է խառնվորդի լեռներում՝ Սեպուհ լեռան ս. Մինասի անապատում, այսինքն՝ եղել է «Վերի վանաց» սան⁴⁹, Պլուզը Եկեղյաց դավառի իշխանական տան (գուցե և՛ հոգևոր սերնդի) շառավիղ էր (տաղում՝ քահանայի գավակ)։ Նրա գործերից ենթադրվում է, թե ծնողներն այնքան էլ չեն կամեցել իրենց որդուն հոգևոր կրթության ու ծառայության նվիրել, որից և՛ դժգոհում է Երզնկացին ու իր ամբողջ կյանքում ուսման ծախսը հագեցած չի՝ համարում։ Այդ տարիների մասին իր «Յաղագս երկնային զարդուց» չափածո քերթվածում նա գրում է.

Ձի ժամանակս իմ կորուսի յայժ անպիտան,
և վաստակոց մշակ եղէ անշահեկան,

Վասն այսորիկ րարծի թողի՝ զճաշակն ուսման
և զանձն ի գործ ետու հոգոց աշխատեակալ⁵⁰,

Հնարավոր է, որ Երզնկացին տաղը գրած լինի «յոյժ անպիտան» կորցրած հենց այդ ժամանակներում՝ երիտասարդ հասակում պատահած դիպվածի հիման վրա, քանի դեռ զբաղված էր աշխարհական հոգսերով, որ հետագայում համարում է «ունայն» ու «անշահեկան»։ Հայտնի է, որ «ասուն տարիքում է միայն Երզնկացին լիովին տրվել գիտական, հասարակական գործունեության։ Նա վարդապետ է օծվել 1268 թ., երբ արդեն առնվազն 38 տարեկան էր⁵¹։ Երդընկացին ծնվել է մոտավորապես 1230 թ.։ Նրա պատանեկության շրջանը համընկնում է Բաշու զորավարի Երզնկան գրավելու և շահնա թողնելու տարիներին (1243 թ.)։ Սա ևս համապատասխանում է Հովհաննեսի ու Աշայի հանդիպման ժամանակներին, որ տեղի էր ունեցել քանի դեռ քաղաքն ուներ իր շահնան և քանի դեռ Հովհաննեսը պատանի էր՝ «Վերի վանաց» աշակերտ։ Ավելի ուշ՝ 1250-ական թվականների սկզբներին, քաղաքի իշխանությունն արդեն հայկական էր, ղեկավարները՝ հայ հոգևոր ու աշխարհիկ առաջնորդներ⁵²։ Ինչպես տաղի Հովհաննեսն էր «ծանր ի խեղաց» և ուսումնասիր, որ դպրատնից վերադառնալիս Սաղմոսարան կարդալով էր խշնում քաղաք, այնպես էլ Պլուզն էր առաջադեմ զաղափարներով համակված ուսումնածրավ երիտասարդ, որ օժտված էր նաև բանաստեղծելու և կաֆա՝ ասելու շնորհքով⁵³։ Բանաստեղծ ու կաֆայագիր էր նաև տաղի Հովհաննեսը, որի մասին ասվում է.

Բըռնեց զգօզ ձիուն ագին,

Կաֆա ասաց ամէն ձարին⁵⁴։

Այսպիսի ու այսպիսի զուգահեռությունները, կապված և՛ տեղի՝ Երզնկայի, և՛ ժամանակի XIII դ., և՛ հեղինակի կյանքի, գործի ու ստեղծագործության նկարագրի հետ, չեն կարող պատահական լինել։ Դրանք ավելի շեշտում են տաղը Երզնկացունը համարելու ճշմարտությունը և ոչ թե Թլկուրացուն կամ հետագա դարերի որևէ այլ Հովհաննեսի վերագրելու հնարավորությունը։ Առարկելու դեպքում, ինչպես գրում է Կ. Կոստանյանը, «դեռ պետք է հաստատել, որ կա եղբր մի այլ Հովհաննես Երզնկացի «կատակաբան»։ Սպասելով այդպիսի հաստատություն, մենք սկսածառ շունենք չհավատալու մեր ձեռքին տակ գտնված գրչագրի հավաստի ցուցմանը⁵⁵։

Այսպիսով՝ ձեռագրական, քնագրական, պատմական ու կենսագրական բոլոր տեղեկությունները միարան են և համոզում են, թե տաղը կապվում է Երզնկայի և Երզնկացի հեղինակի հետ, որ՝ ամենամեծ հավանականությամբ, Պլուզ Հովհաննես Երզնկացին է։ Այս միաժամանակ նշանակում է, թե Երզնկացին ոչ միայն խոհախրատական, իմաստասիրական քերթվածների, հայրեն-

48 Տե՛ս «Հովհաննես Երզնկացի», էջ 39, է. Բ ա ղ դ ա ս ա ր յ ա ն, էջ 33—34, Մատենադարան, ձեռ. № 2993, 1679, էջ 168ա։

49 «Հաւաքումն մեկնութեան քերականի», էջ 83։

50 «Տետրակ», էջ 50։

51 Տե՛ս է. Բ ա ղ դ ա ս ա ր յ ա ն, էջ 23։

52 «Երիզա և Եկեղյաց դավառ», էջ 127—139, «Հովհաննես Երզնկացի», էջ 13—16, «Կոստանյան Երզնկացի», էջ 17—21, է. Բ ա ղ դ ա ս ա ր յ ա ն, Երզնկայի հայկական իշխանությունը XIII—XV դարերում, էջ 36 և հետ.։

53 Կաֆաները տե՛ս է. Բ ա ղ դ ա ս ա ր յ ա ն, էջ 236—239։

54 «Հովհաննես Երզնկացի», էջ 168։

55 ԳԱԹ, Կ. Կոստանյանի արխիվ, № 279։

ձերի ու պանդխտության հեղինակային երդերի, այլև սիրերգության հիմնադիրն է: Սրանից բնթում է մի երրորդ հետևություն նույնպես. հայ միջնադարյան դրավոր տաղերգության մեջ սիրային բանաստեղծությունը ևս սկզբնավորվում է ո՛չ ավելի ուշ, քան XIII դ.:

АВТОР И ВРЕМЯ НАПИСАНИЯ ОДНОГО СРЕДНЕВЕКОВОГО СТИХОТВОРЕНИЯ

АРМЕНИИ СРАПЯН

Р е з ю м е

Поэма, начинающаяся строкой «Что за пламя меня сжигает», в рукописи № 7717 (1695 г.) Матенадарана им. Маштоца приписывается известному мыслителю-энциклопедисту и поэту XIII в. Плuzu Ованесу Ерзпкаци. Впоследствии она была опубликована под его же именем. Некоторые исследователи считали, что любовное содержание и языково-стилистические особенности поэмы чужды творческому духу поэта и приписывали ее другому Ованесу Ерзнкаци или Ованесу Тлкуранци. Однако для подобного предположения нет оснований. Как рукописные, текстовые источники и идейное содержание поэмы, так и языково-стилистические и эстетические особенности, исторические и биографические данные говорят в пользу авторства Плuzu Ованеса Ерзнкаци.